Դարբասներից մէկի դրան ճակատին կախուած է «Արքայական» կոչուած տախտակը, որ միկադօի նէէրն է եւ որի վրա ոսկէ տառերով գրուած է հանգուցեալ սիօգունի անդրաշխարհիկ անունը: Ճապոնացիք խիստ գնահատում են գեղեցիկ գիրը, եւ ճիշտն ասած՝ ճապոնական գիրը շատ գեղարուեստական է: Իզուր չեն ասել, որ նրանք նկարում են այնպէս, ինչպէս գրում են, եւ գրում են այնպէս, ինչպէս նկարում:

Իմ հիացումս աւելի սաստկացաւ, երբ ես քաթանի հողաթափները կօշիկներիս անցնելով՝ մտայ տաճարը: Շուրջը ամեն բան յղկուած, փորագրուած ու ոսկեզօծ է այն աստիճան, որ մարդու աչքը շլանում է: Ամբողջ առաստաղը բաժանուած է քառակուսիների, յղկուած ու լակուած, իսկ ամեն մի քառակուսիի մէջ փիւնիկ թռչունի պատկերն է: Առաստաղի տակ, պատերի վրա փորագրուած են ծաղիկների մէջ թռչկոտող մանրիկ թռչուններ, որոնք հիացմունք են պատճառում իրանց բնական ու մաքուր աշխատանքովը: Աւելի ցած նկարուած են առիւծներ, իսկ գետնին, ճիւնափայլ խսիրների վրա շարուած են գեղեցիկ, յղկուած փոքրիկ սեղանիկներ ու արկղիկները, որոնց մէջ սրբազան ձեռագիրներն են պահւում: Ոսկեվառ խորանը զարդարուած է նրբանկար ծաղկամաններով, ուր օրօրւում է լոտոսը, բուդդհիստների համար մաքրութեան խորհրդանշանը:

Այդ բոլոր շքեղութիւնից յետոյ մի տարօրինակ, գուցէ եւ կրթիչ հակապատկեր է ներկայացնում սիօգունի գերեզմանը, որ աչքի է ընկնում իր գեղեցիկ ու ազնւական պարզութեամբը: